

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 45/4

30 հոկտեմբերի 2012թ.

Քննարկվեց «Ստատուս ընդ. Կո» ՍՊԸ 17.10.2012թ. թիվ 10/02 գրությամբ բերված բողոքը « ԿԱ ՊԵԿ Գորիսի ՏՀՏ 09.10.2012թ. թիվ 1002728 ստուգման ակտի դեմ:

Համաձայն « ԿԱ ՊԵԿ նախագահի 27.07.2012թ. թիվ 1002728 հանձնարարագրի « օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «Ստատուս ընդ. Կո» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերափակվող « օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 09.10.2012թ-ին կազմվել է թիվ 1002728 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 10.760.200 դրամ, ինչպես նաև պակասեցման ենթակա ԱԱՀ՝ գումարով 4.107.700 դրամ:

Ընկերության գանգատը վերաբերում է ԱԱՀ-ի գծով լրացուցիչ առաջադրված պարտավորությանը:

Ստուգման ակտի 5-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, ընկերության կողմից 24.05.2010թ-ին ներկայացված 2010թ ապրիլ ամսվա ԱԱՀ-ի հաշվարկի համաձայն, « ԿԱ ՊԵԿ-ի ձեռքբերումները կազմել են 25576000 դրամ, իսկ հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարը՝ 2653600 դրամ: Հետագայում՝ 23.06.2010թ-ին ներկայացվել է ապրիլ ամսվա ճշգրտված հաշվարկ, որտեղ « ԿԱ ՊԵԿ-ի ձեռքբերումները ցույց են տրվել 23995600 դրամ, իսկ հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարը՝ 4262900 դրամ:

Վերը նշված երկու դեպքերով «ԱԱՀ-ի մասին» « օրենքի 20-րդ հոդվածին համապատասխան ապրիլ ամսվա հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ չի ներկայացվել:

Այնուհետև 17.01.2011թ-ին ներկայացվել է ապրիլ ամսվա ճշգրտված հաշվարկ, որտեղ « ԿԱ ՊԵԿ-ի ձեռքբերումները ցույց են տրվել 29591800 դրամ, իսկ հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարը՝ 4305600 դրամ: 17.01.2011թ-ին ընկերության կողմից ներկայացվել է նաև 2010թ. ապրիլ ամսվա հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ճշգրտված տեղեկանք, որում « ԿԱ ՊԵԿ-ի ձեռքբերումները ցույց են տրվել 20583300 դրամ, իսկ ԱԱՀ-ի գումարը՝ 4107700 դրամ:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «ԱԱՀ-ի մասին» « օրենքի 43-1 հոդվածի երկրորդ պարբերությամբ, 2010թ ապրիլ ամսում ԱԱՀ գումարները 4107700 դրամի չափով ավել հաշվանցելու արդյունքում պակաս ԱԱՀ է հաշվարկվել 4107700 դրամ՝ «ԱԱՀ-ի մասին» « օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով տեղեկություններ չներկայացնելու պատճառով: Նշված գումարները հաշվանցվում են տեղեկությունների ներկայացման ժամանակաշրջանի, այսինքն՝ 2011թ հունվար ամսվա համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկով և ենթակա են պակասեցման այդ ամսում:

«ԱԱՀ-ի մասին» « օրենքի 43-րդ հոդվածի համաձայն գանձվում է թաքցված կամ պակաս ցույց տրված ԱԱՀ-ի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 50 տոկոսի չափով, կազմում է 2053850 դրամ:

«Հարկերի մասին» « օրենքի 25-րդ հոդվածի համաձայն կիրառվում է տուգանք 379520 դրամ և 23-րդ հոդվածի համաձայն՝ տույժ՝ գումարով 1113530 դրամ:

ԱԱՀ-ի մասին « օրենքի 43.1 հոդվածի համաձայն չներկայացված 3 հարկային հաշիվների համար հաշվարկվում է տուգանք 15000 դրամ: Նշված հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները չեն ներառվել հաշվանցման ենթակա (դեբետային) ԱԱՀ գումարների կազմում:

2010թ հունիս ամսվա համար ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկում իրացման շրջանառությունը ներկայացվել է 15701200 դրամ, իսկ նույն ամսվա համար ներկայացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններում ընկերության կողմից դուրս գրված հարկային հաշիվների իրացման շրջանառությունների հանրագումարը ցույց է տրվել 15853700 դրամ: Ստուգմամբ պարզվեց, որ նշված տարբերությունն առաջացել է 30.06.2010թ. <Ղ-Տելեկոմ> ՓԲԸ-ի 152500 դրամ գումարով (առանց ԱԱՀ) թիվ 062 հարկային հաշիվը դուրս գրված չլինելու դեպքում տեղեկանքում լրացվելու պատճառով: <Ղ-Տելեկոմ> ՓԲԸ-ին մատուցված ծառայության նշված գումարը ներառված է եղել 30.06.2010թ-ի թիվ 061 հարկային հաշվի գումարի մեջ:

2010թ-ի համար ներկայացված ԱԱՀ հաշվարկներում 2010թ-ի ընթացքում ընկերությունը ցույց է տվել 12578100 դրամ ԱԱՀ-ից ազատված շրջանառություն: Ստուգմամբ պարզվեց, որ նշված գումարից 7705500 դրամը <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն հարկվում է գրոյական դրույքաչափով, սակայն ընկերությունը այդ գումարները լրացրել է ԱԱՀ-ից ազատված իրացման շրջանառությունների տողում, իսկ 4872600 դրամ ԱԱՀ-ից ազատված իրացման շրջանառությունների մասով ընկերությունը իրականացրել է ձեռք բերված ապրանքների և ծառայությունների առանձնացված հաշվառում:

Ընդամենը ենթակա է բյուջե վճարման 7669600 դրամ և պակասեցման 4107700 դրամ ԱԱՀ:

<Ստատուս ընդ Կո> ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

ՀՀ ԿԱ ՊԵԿ Գորիսի ՏՀՏ կողմից ներկայացված 09.10.2012թ. թիվ 1002728 ակտի 5-րդ կետում նշված վճարման ենթակա և պակասեցված 4107700 ՀՀ դրամ ավելացված արժեքի հարկի գումարի հետ կապված հաշվարկվել է և ստուգման արդյունքներում ներառվել.

ԱԱՀ տույժ 1113530 ՀՀ դրամ,

ԱԱՀ տուգանք 2433370 ՀՀ դրամ,

ընդամենը 3546900 ՀՀ դրամ լրացուցիչ հարկային պարտավորություն, որի համար որպես հիմք է վերցվել ընկերության կողմից 2010թ. ապրիլ ամսվա <Դուրս գրված (գնորդներին տրված) և (կամ) մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքի> ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չներկայացնելը, սակայն նշված տեղեկանքն ընկերությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում ներկայացրել է, բայց Գորիսի հարկային տեսչության կողմից սխալմամբ չի հաշվառվել: Մեր ակտի նախագծին կցված առարկությունը չի ընդունվել:

Ընկերությունը խնդրում է ստուգման ակտի վերոնշյալ գումարների պարտավորությունը չեղյալ համարել և կատարել ակտով առաջադրված հարկային պարտավորությունների վերահաշվարկ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), հաշվի առնելով <Ստատուս ընդ Կո> ՍՊԸ ներկայացուցչի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց բերված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ ընկերության բողոքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

Սույն բողոքի քննարկման ընթացքում պարզվեց հետևյալը.

ընկերության կողմից 24.05.2010թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ Գորիսի ՏՀՏ է ներկայացվել 2010թ. ապրիլ ամսվա ԱԱՀ-ի հաշվարկը, որի համաձայն ՀՀ տարածքում ձեռքբերումները կազմել են 25576000 դրամ, իսկ հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարը՝ 2653600 դրամ: Որից հետո ընկերության կողմից 25.05.2010թ. <Ավելացված արժեքի հարկի ճշգրտված հաշվարկին կից գրությամբ> Գորիսի ՏՀՏ է ներկայացվել 2010թ. ապրիլ ամսվա ԱԱՀ-ի ճշգրտված հաշվարկը, ինչպես նաև <Դուրս գրված (գնորդներին տրված) և (կամ) մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ> տեղեկանքը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ Գորիսի ՏՀՏ պետի 29.05.2010թ-ի գրությամբ ընկերության կողմից ներկայացված 25.05.2010թ. <Ավելացված արժեքի հարկի ճշգրտված հաշվարկին կից գրություն>-ը, 2010թ. ապրիլ ամսվա ԱԱՀ-ի ճշգրտված հաշվարկը և <Դուրս գրված

(գնորդներին տրված) և (կամ) մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքը, վերադարձվել են ընկերությանը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ Գորիսի ՏՀՏ պետի 29.05.2010թ-ի գրության համաձայն, վերոգրյալ փաստաթղթերը վերադարձի համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ Գորիսի ՏՀՏ-ում արդեն առկա է ընկերությունում բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգման կատարելու վերաբերյալ 20.05.2010թ-ի թիվ 1010559 հանձնարարագիրը:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում ՀՀ ԿԱ ՊԵԿ Գորիսի ՏՀՏ-ն իրավունք չունի վերադարձնել ընկերության կողմից սահմանված կարգով ներկայացված փաստաթղթերը թեկուզ միայն այն պատճառով, որ գրությունում հիշատակված 20.05.2010թ-ի թիվ 1010559 հանձնարարագրով ավելացված արժեքի հարկի ստուգվող ժամանակաշրջանն ընդգրկել է 01.01.2009թ-ից մինչև 31.03.2010թ.:


Վերոգրյալից հետևում է, որ 2010թ. ապրիլ ամսվա ԱԱՀ-ի ճշգրտված հաշվարկը, ինչպես նաև <Դուրս գրված (գնորդներին տրված) և (կամ) մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ> տեղեկանքը պետք է ներկայացված համարվեն դրանք ՀՀ ԿԱ ՊԵԿ Գորիսի ՏՀՏ-ում մուտքագրվելու օրվանից: Հետևապես ստուգման ակտի 5-րդ կետով արձանագրված՝ 2010թ. ապրիլ ամսվա հարկային հաշիվներով կատարված ձեռքբերումների գծով ավելացված արժեքի հարկի գումարը՝ 4.107.700 դրամը, պետք է հաշվանցված համարվեր ոչ թե 2011թ-ի հունվար ամսում, այլ վերոգրյալ փաստաթղթերը ՀՀ ԿԱ ՊԵԿ Գորիսի ՏՀՏ-ում մուտքագրվելու օրվա դրությամբ: Նման պայմաններում ստուգման ակտով 4.107.700 դրամի նկատմամբ ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ հաշվարկված պարտավորությունները՝ ընդհանուր գումարով 3.546.900 դրամ, ենթակա են նվազեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

#### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Գորիսի ՏՀՏ 09.10.2012թ. թիվ 1002728 ստուգման ակտի 5-րդ կետից նվազեցնել ընդամենը 3.546.900 դրամ, այդ թվում՝ տույժ 1.113.530, տուգանք 2.433.370 դրամ:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ